հայ վանականներ Պաղեստինի օրթոտոքս վանքերուն մէջ բնակելով՝ խառնուած են տարբեր ազգութեանց վանականներուն հետ, բայց անոնք իրենց սեպհական եկեղեցիներուն մէջ իրենց լեզուովը կը կատարէին պաշտամունք, կ'աղօթէին, կը սաղմոսէին, կը հետևէին ձեռական աշխատանքի և գրչութեան արհեստին, և ասոր կը վկայեն ա՛յն բազմաթիւ գրչագիրները, որ կը մնային Երուսաղէմի, Մար–Սաբայի, Սինայի և վերին Եգիպտոսի անապատներուն մէջ, ինչպէս այլուր գրած ենք (Տաթեւ, 1929, էջ 39–50). ամուր կերպով կը պահէին Հայ Եկեղեցին դաւանութիւնը, առանց զատուելու ընդհանուր եղբայրակցութենէն. անոնք հայ կը մնային միեւնոյն նուիրական յարկին տակ. և այս պարագան տարօրինակ երևոյթ մը չէր կրնար ըլլալ, քանի որ հին օրերէ սկսեալ այլևայլ ազգերու վանականները թէ՛ Երուսաղէմի և թէ՛ շրջակայից Տնօրինական Ս. Տեղերու մէջ կը պահէին միևնոյն քրիստոնէական եղբայրակցութիւնը, անխտրօրէն մասնակցելով օրուան պաշտամունքներուն և արարողութեանց։

Այս եղանակաւ էր որ ի հնումն Քոզիբայի վանքին նաւակատիքի տօնադարձը, ըստ Երուսաղէմի ծիսարանին, հանդիսաւորապէս կը կատարուէր Յունուար 18ին (R. B. 1914, էջ 461)։ Ի զուր Abbé Martigny իր Dictionnaire des Antiquités chrétiennes գիրքին մէջ (էջ 318) կը պնդէ թէ Ս. Յովակիմայ տօնը Թ. դարուն միայն հաստատուած է, և թէ Ս. Կուսի ծնողաց անունը Է. դարէն առաջ միայն աւանդավէպ մը կը նկատէ. բայց յիշեալ հեղինակը եթէ տեղեակ ըլլար Արևելեան եկեղեցիին դարաւոր աւանդութեան և Քոզիբայի վանքին պատերուն վրայ նկարուած Ս. Յովակիմայ պատկերներուն և անոր անուան կառուցուած հնադարեան վանքին և եկեղեցիին, ապահովաբար պիտի չհամարձակէր գրել այդ տողերը։